ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 49-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 6-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևհամայնքի 2024 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի հաղորդման մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամիսների կատարման ընթացքի հաղորդման մասին

3. Գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար առանձնացված 09-108-0102-0004 09-108-0113-0009 09-108-0112-0005 09-108-0001-0042 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը սեփականության իրավունքով ամուսիններ Սլավիկ Աշոտի Սիմոնյանին և Ադելա Արշամի Հայրապետյանին անհատույց տրամադրելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող «Գյուղատնտեսական» նպատակային նշանակության «Այլ հողատեսք» գործառնական նշանակության 1.38175 հեկտար հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ գյուղի 2–րդ փողոցի թիվ 77/4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվության կարգով օտարելու մասին

6. Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի կողմից Տաթև համայնքին գյուղատնտեսական տեխնիկայի անհատույց օգտագործման իրավունքով նվիրատվությունն ի գիտություն ընդունելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հերթական նիստի օրը, ժամը որոշելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 50-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, որոշման նախագծի՝ կողմ -8, դեմ- 0, ձեռնպահ -0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի հաղորդումը Տաթև համայնքի բյուջեի 2024 թվականի առաջին կիսամյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, որոշման նախագծի՝ կողմ -8, դեմ- 0, ձեռնպահ -0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի հաղորդումը Տաթև համայնքի բյուջեի 2024 թվականի ինն ամիսների կատարման ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 52-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ՏՆԱՄԵՐՁ ԿԱՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 09-108-0102-0004 09-108-0113-0009 09-108-0112-0005 09-108-0001-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ ՍԼԱՎԻԿ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԵՎ ԱԴԵԼԱ ԱՐՇԱՄԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1–ին մասի 21–րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63 հոդվածի 1-ին մասով, 64 հոդվածի 1-ին մասի 1–ին և 2–րդ կետերով, 5–րդ կետի 2-րդ և 5–րդ պարբերություններով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 07–ի «Հայաստանի Հանրապետության լեռնային եվ բարձրլեռնային բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» թիվ 1517–Ն որոշումով, անասնապահությամբ և հողագործությամբ զբաղվող, Արցախից Քաշունի լեռնային, կիսալքված բնակավայր մշտական բնակության տեղափոխված Սլավիկ Սիմոնյանի ընտանիքին օժանդակելու հրամայականի հիմքով, հաշվի առնելով նաև, որ ընտանիքը նախկինում չի օգտվել հողի սեփականաշնորհումից, ինչպես նաև նկատի ունենալով, որ Քաշունի գյուղի սեփականաշնորհման և բարեփոխումների հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 07–ի թիվ 03 որոշմամբ Քաշունի գյուղում մեկ ծխի հաշվով սահմանվել է գյուղնշանակության հողատարածքների 4 հեկտար և տնամերձ հողամասի 0,25 հեկտար սեփականաշնորհման առավելագույն չափեր, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8 , դեմ-0 , ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Տաթև համայնքի ավագանին *որոշում է*՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 09-108-0102-0004 (վկայական՝ 19022024-09-0078), 09-108-0113-0009 (վկայական ՝ 19022024-09-0077) և 09-108-0112-0005 (վկայական՝ 19022024-09-0076) կադաստրային ծածկագրերով գյուղնշանակության՝ համապատասխանաբար՝ 0,81192 հեկտար + 2,18808 հեկտար +1,0 հեկտար =4,0 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասերը՝ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու, իսկ 09-108-0001-0042 (վկայական ՝ 12092024-09-0051) կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման 0,12 հեկտար մակերեսով հողամասը՝ որպես տնամերձ կամ անհատական բնակելի կառուցապատման և սպասարկման համար օգտագործելու նպատակով սեփականության իրավունքով անհատույց տրամադրել ամուսիններ Սլավիկ Աշոտի Սիմոնյանին (նույնականացման քարտ՝ 003542198, տրված՝ 10.12.2014թ 041–ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, բնակավայր Քաշունի 2 փողոց տուն 2) և Ադելա Արշամի Հայրապետյանին (անձնագիր՝ AT 0695840, տրված՝ 12.03.2021թ 041–ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, բնակավայր Քաշունի 2 փողոց տուն 2)

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքները ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշմամբ ծագող գույքային իրավունքների վավերացման և պետական գրանցման համար պարտադիր վճարները կատարել շահառու Սլավիկ Սիմոնյանի և Ադելա Հայրապետյանի միջոցներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելուց հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ» ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ «ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ» ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.38175 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7–րդ հոդվածի 5–րդ մասի 1–ին կետով, 44–րդ հոդվածի դրույթներով, 49–րդ հոդվածի 1–ին մասի 1–5 ենթակետերով, 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետով, 67-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 , ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի վարչական տարածքում գտնվող «Գյուղատնտեսական» նպատակային նշանակության «Այլ հողատեսք» գործառնական նշանակության 1.38175 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-073-0102-0262, վկայական N 12092024-09-0049) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքով աճուրդ-վաճառքով օտարելուն:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով սահմանված գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելուց հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՏ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 77/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 34-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի 2018 թվականի մայիսի 10-ի N<<341-01/Վ-18>> և N<<341Բ-01/Վ-18>> անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ հաշվետվությունը՝ ըստ որի Տաթև համայնքի Խոտ գյուղի 2-րդ փողոցի թիվ 77/4 հասցեի շենք շինության շուկայական գինը կազմել է 316809 (երեք հարյուր տասնվեց հազար ութ հարյուր ինը) ՀՀ դրամ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված աղյուսակի 17-րդ տողի գործակիցը, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Տաթև համայնքի Խոտ գյուղի 2-րդ փողոցի թիվ 77/4 հասցեում գտնվող 09-047-0004-0007 կադաստրային ծածկագրով 18.3 քմ անշարժ գույքը, որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով նվիրատվության կարգով օտարել նշված անշարժ գույքը փաստացի տիրապետող սահմանամերձ Տաթև համայնքի Խոտ բնակավայրի հետևյալ բնակիչներին՝ Հակոբյան Մարգարիտ Հակոբի/անձնագիր՝ AL0309476, տրված

28.06.2023թ, 032-ի կողմից, ծնված 17.07.1984 թ./, Գրիգորյան Նարեկ Արմանի/ անձնագիր՝ AL0309485, տրված 28.06.2023թ. 032-ի կողմից, ծնված 08.01.2006 թ./:

2. Սույն որոշման 1–ին կետով նշված անշարժ գույքի սպասարկման և պահպանման համար առանձնացված՝ «Բնակավայրերի» նպատակային նշանակության «Հասարակական կառուցապատման» գործառնական նշանակության 0.0028 հա հողամասը՝ 9428.8 (ինը հազար չորս հարյուր քսանչորս ամբողջ ութ տասնորդական) ՀՀ դրամ կադաստրային արժեքով (330,000x28x0.00102=9428.8), որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով օտարել սույն որոշման 1–ին կետով նշված գույքը ձեռք բերող նվիրառուներին:

3. Սահմանել, որ նվիրաբերվող անշարժ գույքի և օտարվող հողամասի օտարումից բխող գործարքների նոտարական վավերացման և պետական գրանցման համար անհրաժեշտ վճարումները կատարում են նվիրառուները :

4. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելուց հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 55-Ա

ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի միջև 2024 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված Նվիրաբերության պայմանագրի նախագիծը, համաձայն Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն՝ Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Սվարանց բնակավայրին անհատույց օգտագործման իրավունքով գյուղատնտեսական տեխնիկա նվիրաբերելու պատրաստակամությունը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի հետառկա փոխհարաբերությունների ամրագրման ինչպես նաև շարունակական գործընկերության, փոխշահավետ ներդրումային ծրագրերի նախանշման, իրագործման նպատակով, կնքել համագործակցության հուշագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելուց հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024 թվականի N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ, ԺԱՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով Տաթև համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետութան Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը՝ 15:00 -ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ